յոյսեր տուաւ, թէ մեր տիրապետութիւնը կը հաստատուի:

«3 Յունուարի. Գ. Պոտեօմկին իշխանի պատուէրով ես եւ Յ. Լ. Լազարեւը նրա մօտ գնացինք: Շատ խնդրեցինք մեր ազգի եւ Հայաստանի ազատութեան մասին: Նա ինքն երկար հարցումներ արաւ մեր ազգի, Հայրապետական աթոռի եւ կաթողիկոսի դրութեան մասին: Մենք թախանձանօք աղաչեցինք նրան վերականգնել Մեծ Հայաստանում, այն է Երեւանում, մեր տիրապետութիւնը: Նա պատասխանեց, թէ այդ հնարաւոր գործ է, բայց թէ դրա համար անհրաժեշտ է, որ Հայրապետն ու տեղական տանուտէրերից ոմանք խնդիր տան իրենց ազատելու մասին, որպէսզի օգնութեան հասնելու առիթ լինի»:

Նոյն թուի Յունուարի 10-ին Արղութեանը Սուվորովին ներկայացրեց հետեւեալ յուշագիրը, որը բերում ենք Լէօի թարգմանութեամբ, բայց որոշ լրացումներով եւ փոփոխութիւններով1):

«Հայաստանը մի քանի դար է, ինչ զրկուել է իր թագաւորից եւ առանձին կառավարութիւնից: Շատ տեղերի տիրել են թուրքերը եւ պարսիկները, իսկ մի փոքրիկ մասը, այսինքն՝ Ղարաբաղը, մինչեւ այժմ էլ մնում է անկախ: Բայց եթէ ազգից մի գլխաւոր դուրս գայ, շատ հեշտ միջոցով Հայաստանը կարող է նորից վերականգնել եւ կարճ ժամանակի ընթացքում տեղի կ'ունենայ ժողովրդի մի ոչ փոքր հոսանք դէպի Հայաստան:

«Բնական ամուր տեղերը բաւական լաւ միջոց կարող են դառնալ ինքնապաշտպանութեան համար. հողի յատկութիւնը եւ կլիման, առանց որեւէ պակասութեան, կարող են տալ բոլոր հարկաւոր նիւթերը. նոյնիսկ սեփական վառօդ, երկաթ եւ կապար կարող են ունենալ:

«Ղարաբաղի մելիքները թէեւ ոչ ոքից կախում չունեն, բայց իրենց անմիաբանութեամբ զօրեղացրել են մահմեդական Փանահ խանին եւ պատճառ են դարձել իրենց ուժերի քայքայման: Բացի դրանից, այդ իշխանների տգիտութիւնը բոլորովին անպէտք է դարձնում նրանց՝ թէ՛ իրենց եւ թէ՛ ամբողջ ազգի համար:

«Միւս տեղերի հայերը, լինելով պարսիկ խաների իշխանութեան տակ, հարստահարուած են եւ նրանց մեծ մասը փախել են թուրքական երկրները — Փոքր Հայք, Վան, Կարս, Կարին եւ ուրիշ տեղեր:

«Եթէ ժողովրդի ընտրութեամբ կամ բարձրագոյն հաճութեամբ ազգից մի գլխաւոր դուրս գար, առաջին անդամի համար բաւական կը լինէր, որ նա կարողանար հաստատուել Դերբենդում եւ նրան օգնութիւն տրուէր տիրելու Շամախուն եւ Գանձակին: Այն ժամանակ Ղարաբաղից ու Սղնախից2), որոնք անկասկած կը միանան, բաւականաչափ զօրք հանելով, կարող է նաեւ Երեւանը եւ միւս քաղաքները գրաւել: Դրա համար հարկաւոր է երկու կամ երեք հազարից ոչ աւելի զօրք երկու տարուան ընթացքում, մինչեւ որ գլխաւորը կարողանայ գրաւել Երեւանը: Երեւանը գրաւելուց յետոյ՝ հայկական դաւառների եկամուտներով, առանց մի պակասութիւն զգալու, կարելի է պահել զօրքերի մի մեծ բազմութիւն:

«Բայց հայոց պետը սկզբում պէտք է ունենայ մի քիչ թնդանօթաձիգ եւ հետեւակ զօրք, որպէսզի կարողանայ պաշտպանուել եւ ապահով լինել, մինչեւ որ ազգային զօրքը կը սովորէ զինուորական անհրաժեշտ գիտելիքները եւ այնուհետեւ նա ինքը կարող կը լինի ամրացնել իր սահմանները եւ պաշտպանուել Թիւրքիայի ու Պարսկաստանի յարձակումներից:

«Այսպիսի մի ձեռնարկութիւն կարող է կայսերական մի խօսքով եւ ամենահեշտ միջոցով, առանց ամենափոքր կասկածի անդամ, գլուխ գալ եւ նրա (Եկատերինայի) հովանաւորութեամբ մի կարճ միջոցում ո՛չ միայն կ'ամրապնդուի ի յաւիտենական փառս Ռուսաստանի, այլ եւ ապագայում կարող է ծառայել Թիւրքիան եւ Պարսկաստանը ճնշելու համար, որովհետեւ երբ հայ ժողովուրդը կը համախմբուի իր կառավարութեան իշխանութեան տակ եւ մի քիչ էլ կ'ընդարձակէ իր սահմանները, այն ժամանակ կը ստանայ աւելի մեծ

1) «Գործեր» II, եր. 70. Լէօ, «Հայկ. Հարցի Վաւերագրեր», եր. 20:

2) Այդպէս կոչւում է Շամախու շրջանը: